


Հ Օ Ս Յ Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE



ՊԱՅՄԱՆՔ

ԵՂԵՂՅՈՒՄ

Տարեկան դրոշմ 30

ԱՐՄԱՍՏՍԱՆ

Տարեկան գրանց 10

Բաժանորդ ՅԱԵԼՈՒՍՏԵՆԻ փոխարէն վերաճելի գործ պիտի ըլլան:

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չե՛ն տրուիր:

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԹ ԷԱՅԱԹԵՐԹ

ՕՐԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԹ ՄԻՈՒԹԵԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

Բաժանորդագրութիւնը կանխիկ է. իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր համաձայնութեամբ:

Թի՛ւ ՍՐՇԱՆՈՅՍԻ եւ թի՛ւ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ ներքակալ խնդրոց համար պէ՛տ է դիմել ներքազուրկեալ հասցեով քերթիս Մասնախարարին, որ է՛:

ԿԸ ՇՐՄԱՍՐԱԿՈՒԻ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրներ որդակի պատասխանաւ եւ ե՛ն իրենց գրածներն

ZUSE 20 ՓԱՐԱ ՈՂԶ

ՕՐՈՒԱՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Հայութեան կեանքի հորիզոնը դարձեալ թիպաբան ամպերով կը մթաղնի:

Խանդավառութեան, խրախուսանքի, ծափահարութեան, սիրազեղ համբոյններու... Եթէ երբէք յուզայական չէին ասոնք... Եղբայրական սեփական, այնքան զգուշացող, որ ասին անհնարաբար յայտնուած են եղեր դժբաղդարար, կը յաջարէ անս վայելատուներ, լացն ու կոծր ողբն ու կակաւեր...

Հայաստանի սիրտէն, ու այլ և այլ շատ մը գաւառական կեդրոններէ արեան բոսորագոյն կայլակներ կ'ընդունին, ու հայութիւնը ծովահեղձ ընելու պատրաստակալութիւն ցոյց տուող հեղեղներ կը կազմուին այդ մեծակաթիլ կայլակներէն:

Հայուն դժբաղդ ճատատագրին սեւութեանը՝ թէ ուրիշ շատ մը պատճառներու պէտք է վերագրել այս ահարկու արեւահեղութիւնները: Յետոյ մեր մեղքերուն թէ անօրինակ սխալներուն արդիւնքը նկատելու ենք այդ ամենը:

Եթէ պահ մը ընդունինք նոյն իսկ թէ՛ հեռագրական գործակալութեանց տուած տեղեկութիւնները, և այլ և այլ թերթերու պատճառակալութիւնները, խուճապի արդիւնքէ առաջացած չափազանցութիւններ իսկ ըլլան, և ծանօթագրուած տեղեկութիւններէն ահագին թիւեր զեղծելով, բարձունքներ ու սրունքներ կատարենք, գարձեալ տիրող խեղճ կացութիւնը անհնարին և աւտղելի ըլլալէ չի դադարի և աղելիարը յորջորջուելու ամեն անպատեհութիւնները կը մնայ իր մէջ, բառին ամենալայն իմաստով:

Կարծեցեալ ու խորուսիկ ազատութիւն մը - մերկնը - որ տակաւին սաղմնային վիճակի մէջ կ'անհանայ, կ'անհատի՛ եթէ ոչ անդառնալի, գոնէ զերգրապէս դժուարակնուներն...

Ազատութեան լուսաշող արշալոյսին ճառագայթարձակ յուլացումները՝ փոխանակ մեր մտքին լոյսը արծարծելու և բաղմապատկելու, գինովի գեգերանքներուն մատնե-

ցին զմեզ: «Այսօր» միայն մտածեցինք, «վաղուանը» շատ ուշի վերապահելով... Մինչդեռ կեղծաւոր թշնամին արթուն կը հսկէր...

Ազատութիւնը խոհականօրէն և օգտակարապէս գործածելու տեղ, արաւը մեզի համար վար դրինք՝ արդիւնքը սերնդներու խղճամտութեանը թողլով: Եւ արդիւնքը, սիրտը և անփոխարինելի՛ է...

Տակաւին շատ ու շատ տողեր կարելի է իրարու քով բերել մեր ծայրայեղութեան հասած անհարգութիւնները խորանելու համար, սակայն ո՞վ պիտի ուզէ լսել: Մեզմէ ոմանք արդէն իրենց զաղափարները ու խեղճը ծախած՝ սխալմամբ հետեւեցինք դարձած են, պիտի կազմուելու համար. ոմանք լաւ ձեռքերու մէջ դանուած ըլլալ կը կարծեն ինքզինքին, ոմանք լաւ պայմաններու մէջ և ճարպիկօրէն ցուցադրուած ապագաներու հեռապատկերներուն անմուռնջ սպասարկուները դարձած են. ոմանք Արիւն և դիակ շահագործելու սնտուկանձ մարմնը ունին իրենց սրտին մէջ. ոմանք ալ՝ և շատեր են ասոնք՝ որ խորունկ քունի մէջ կը խուկան տակաւին...:

Խեղճ ՀԱՅ ԱԶԳ...:

Եթէ անթաղ մնացած հաղարար գիտիներու հեռապատկերը և մահամեծի հեռութիւններուն նոյնչափ հեռաւոր արձագանքը չի յոյստէր սրտերին ու չի դաւարէր, մեր աղիքները դեռ ինչե՛ր կարելի չէր ըսել մեր ազգին ճակատագրին հետ խաղաղօր վանճաղներուն...: Բայց մահու առջև ամեն սխալ պէտք է որ լուէ, ըսուած է. և եթէ կարելի է որ լուէ...:

Կիլիկիան ընայնուելու վտանգին առջև է, եթէ ուրիշ ըսուածները բառ առ բառ ճիշդ են և պատճառները... բաւարար. միւս բոլոր գաւառներն ալ ցաւոց և հեծութեան արձագանքներ թռցնելէ զտար առած չունին արդէն: Սարսափը համատարած է. կրուտար հանգ և անգարմանելի, իսկ ապագան գլխովին անձամբ. ու մենք որո՞ւ պիտի վստահինք. միջիններո՞ւ և ատենախօսութեանց, թէ՛ ճարճատուն լեզուադարութեանց:

Սպասենք և յուսանք ուրեմն. տեսները՝ օտուտը ապագան ի՞նչ անակնկալներ վերապահած է մեզի:

Ե. ՅՈՐՈՍԵԱՆ

Ն Ա Մ Ա Կ Ա Ր Ս Բ Կ Ի Ր Է Ն

ԱՌԵԼԱԿՈՒՄ ԵՒ ԽՈՇՏԱՆԿՈՒՄ

Նամակագիրը՝ արդէն այս էջերուն մէջ ինչքոյ նիւթ եղած առեւտրումի (?) մը վրայ խօսելէ յետոյ՝ կաւելցնէ հետեւեալը:

Ասկից դատ մէկ քանի օր առաջ տխուր ու նոյն ատեն աչքառու դէպք մ'ալ պատահեցաւ. քանի մը հայ երիտասարդներ՝ քաղաքիս մէջ Ձէնք արձակել արդիւնքը ըլլալով՝ քաղաքէն 1 օրով հեռու դաշտ մը գրեցած էին հասարակ զէնքերով, թերևս, սրտորդութեան ունշանառութեան մտադրութեամբ. այս և ասոր նման ընթացքներ մը սովորական և զամ է մահաւանդ հինին մէջ ալ, թուրքի մը կողմէ եղած խաղաղութի մը վրայ՝ չորս հեծեալ, չորս հետեակ ոստիկաններ և մէկ փոլիս անմիջապէս ճամբաներն դարանակալ սպասելով կը շրջապատեն յիշեալ երիտասարդներէն մէկ քանին. ու զէնքերին ձեռքերն կառնեն ու միւսի մ'ալ՝ իրենց Պեկիկի հրացանի կոթով զլուխը կը պատռեն այնպէս պատրուակելով թէ ընդդիմութիւն ցոյց տուած են !! և ողբակի կառավարութիւն կը տանին ու առ այժմ Գասն և չորս օրով բանտարկութիւն կը սահմանեն յիշեալ երիտասարդաց հակառակ իրենց լսողքի ձայնին:

Ուրեմն այսպէս ըմբռնելու ենք ազատութիւնը ու Սահմանադրութիւնը քանի որ խոչտանգումներ չեն պակսիր, և այսպէս այժմ հօճաներ հայաստեաց ճիւղ թիւրքեր - բառին բուն շնակնութեամբ - դեռ հեռու իրադարձել կը ջանան. սակայն մեղադրելի չեն անոնք, և ա՛ն որ զլուխ կը համարուի տակաւին անփոտահութեամբ կամ-թիւրքերէնի ոճով նէմէ կէրէկութեամբ - կը վարուել անոնց դէմ:

Այս ամենուն հեղինակ կը հանդիսանայ առաւելագէտ Մալմիւտիւրի Հազգը Էֆ. որ կրօնամօլ հայատեաց և թուրք թուրք մ'է, որուն դէմ ամեն մարդ բողբ մ'ունի, որովհետեւ ինք գայմագամի բացակայութենէն օգտուելով կ'ուզէ անխնայ շարժարեւ հայը տուրքի ծանր նեղութիւններու ու բանտարկութիւններու ենթակայ ընելով: Եւ նոյն իսկ 1325ի զինուորական տուր-

քըն ալ թե՛վզիթը ընելով դանձել կը ջանայ, անո այս հայաստեաց պաշտօնեան դեռ շնորհիւ կուսակալութեան պաշտօն կը վարէ որովհետեւ կուսակալի կողմէ կեղծ հրամանները գործադրելուն համար շատ սիրուած է. ուրեմն կեցցէ՛ Սահմանադրութիւնը որ այս տեսակ փաստ կուսակալներ դեռ կը պահէ ներքին գաւառներու թշուառ ժողովուրդին վրայ իբրև կուսակալ:

ՀՐԱՀԱՏ

ՔԱՅ ՆԱՄԱԿ

«Արշալոյս» ի բաժանորդներուն կը խնդրուի մեր մինչև ցարգ չ'վճարող բայց յարգելի բաժանորդներէն, որպէսզի բարեհաճին առանց մեր ուղղակի դիմումին սպասելու, իրենց բաժնեգրիները զրկել Redaction du Journal ARCHALOUYCE հասցեով:

Ա. Ա. Չ. Ա. Յ. Ի. Ն

ԳԵՐԱԳ. ՀԻՌԸ

Երկար տարիներ երուսաղէմի մէջ աքտրականութեան դառնութիւնները ճաշակած, իսկ այժմ վերտուն Մուշի Առաջնորդ ընտրուած Դեր, Տէր ներսէս Մ. Վ. Խարախանեան, կը լսենք թէ՛ Աղէսանգրիա հասած և անտի Իահիրէ եկած է, Մուշի կարօտեալներուն համար հանդանակութիւն մը ընելու դիտաւորութեամբ:

Մուշի քաղաքիներուն կարօտութեան վրայ հիմայ չէ որ կը խօսուի, բայց հայուն անկարելի դժբաղդութիւնները, որոնք երարու ետեւ կը հասնին, երբէք չի թոյլատրեցին որ Եղիպտոսայր միացած ուժով մը այդ տառապեալներուն բաւարար օգնութիւն մը ընէր:

Արդարև գաւառներու նախախնամութիւնը եղող Հ. Բ. Ը. Միւթիւնը իր պիտօճէին ներածէն ալ աւելի չափով օգնել ուզեց Մուշի կարօտեալներուն, սակայն այդ ալ անբաւական մնացած է մեղմելու համար տիրող անբերելի կացութիւնը. և արդարև՝ եթէ քանի մը հարիւր թուի հաղարար թշուառներու վերջաց բաժնեկ պէտք ըլլայ. մահաւանդ որ մէկ կողմանէ ալ սղու-

Թիւերը իր անողոք ճիրանները դըրած է խեղճ տառապեալներուն վըզին վրայ . Ի՞նչ չափով պիտի կրնայ օգտակար դառնալ խեղճերուն :

Եզրիպտահայերուն համար, որք շատ մը աւելիներու մէջ առատաձեռնութեան ամենէն գեղեցիկ և գնահատելի օրինակները տուած են, ներքին չպիտի ըլլայ նորին Գերապատուութիւնը ձեռնառնային իր գրգռող ժողովուրդին քով վերադառնալէն : Մանաւանդ որ Գերապատուական այն զոչարդ եկեղեցականներէն չէ՛ որ ամբողջ հայութեան և մասնաւորապէս Եզրիպտահայուն լի ու լի համարումը վայելելու արժանի չ'ըլլայ :

Կը սիրենք յուսալ որ ն. Գերապատուութիւնը փոխանակ իր ոտից փոշիները թօթափելով մեկնելու, իր սրտի անհուն գոհունակութիւնը յայտնել պիտի փութայ և Եզրիպտահայ պիտի լեցնէ իր օրհնութիւններովը որուն շատ պէտք ունի :

ՆԱՄԱԿ ՄԸ

Աղէքսանդրայէն նամակ մը հասած է մեզի, որուն ստորագրութիւնն ալ անձանօթ է թէև, սակայն անոր շոյալիմ խնդիրը հանրային բարոյականի շուրջ դարձած ըլլալուն համար, ուշագրութենէ չենք վերաբերեցնէր :

Նամակագիրը կը դանդաղ թէ՛ Արարելէն ուսուցիչը՝ դասաւանդութեան ժամանակ երբ ո՛ր և է սրանեղութիւնը դիտել, կը հայհոյէ եղբարեակերտներուն :

Պօղոսեան վարժարանի Պատ. Հողաբարձութեան և վարժարանի Տնօրինութեան ամենալուրջ ուշագրութեանը կը յանձնենք սոյն գանգառը, յուսալով որ այս կարգի անտեղութիւնները վարժարանին մէջէն բաւաւրու հոգածութիւնը կունենայ :

ԿԻՒԻԿԻԱ

Հայութեան անցեալ փառքը և հարստութիւնը ներկայացնող այս թանգարանին հիմերն ալ կը խախտին :

Հակառակ հայութեան արուած համբոյրախառն հաւատարմութեան, արեան ծարաւի թուրք խուժանը՝ անշուշտ մասնաւոր հրոմաններու վրայ, աւերի կողոպուտի, սրածութեանց կեղերնաւալըրը դարձուցած է հոն. այդ հայաշատ տեղը :

Այս մասին առնուած տեղեկութիւնները, որչափ որ քիչ մը հակասական և չափազանցուած ալ նըկատուին ոմանց կողմէ, դարձեալ սիրտեր խշխշանելու գրօշմը ունին միշտ իրենց վրայ :

Հայալինճ այս նոր քաղաքականութեան գլխաւոր պատճառները կը կարծուին ըլլալ Կիւիկիայ ազգաբնակչութիւնը նուազեցնելով՝ զայն ուժապառ ընել՝ ապագայ հաւանականութեանց հանգէպ :

Միամտութիւն պիտի ըլլայ կարծելը թէ՛ այդ գոթոյային ծրագրերները յորինող և գործադրութեան գնող անխիղճ արարածներու ցեղակիցները հայութեան բարեկամ կըրտան ըլլալ :

Մենք պահ մը կը մտածենք նոյն խիթ թելագրել որ Կեղծիքի դիմակը երեսնին անցուցած և բարեգործող շարքը բռնակով մեզի ներկայացող այդ վայրագ ազգին քա-

նի մը ներկայացուցիչներուն և զանոնք բարեկամ ճանչցողներուն ալ ըսուէր թէ՛ պարոններ, և Չեր բարեգործութիւնը ձեզի ըլլայ, ալ բաւ համարեցէք մեզի շարքատելը . . . : Ահա մեզի համար ըլլալիք ԲԱՐՈՒԹԵԱՆՑ ամենէն գերազանցը :

Եթէ մեր այս առաջարկը չ'ընդունուիր, ալ բնաւ և ո՛ր և է աւելի չ'հաւատանք այդ անկարելի Կեղծիքիներուն . . . :

ՆՈՐ ԱՇԽԱՏԱԿԻՑ ՄԸ

Առաջինայ թուով «Արշալոյս» պիտի հրատարակէ իր նոր աշխատակիցներէն «ՄԻՆՔ-ՎԱՐՔ» ի մէկ գեղեցիկ և կուռ ուսուցման տարրութիւնը «ԺՈՂՈՎՈՒՐ» վերնագրով :

Մինք-Վարք, Կարծիքի և գաղափարի ազատութեան մեծ արտայան մը, հայ համայնքին մէջ արդէն իր մասնաւոր դիրքը գրուած է, իսկ իր գրութիւնը արդիւնք է երկար տարիներու փոճառութեան և լուրջ ուսուցման տարրութեան, ինչ որ անտարակոյս գըրուածքին արժէքը կը բերապատկէ :

Կը յուսանք թէ՛ Մինք-Վարք Պօլսոյ Մեր մեծանուն աշխատակցին «Ապրումը» պէս շոտով շոտըրեան յի դասապատարի :

«Ապրումը» որուն երրորդ և յաջորդական գրութիւնները ախարժանօք կարգաւու և նոյն խիթ լափելու ըսենք՝ անդէտ էր Եզրիպտահայութեան մեծագոյն մասը :

— Այս անգամ «Արշալոյս» ի հրատարակումին կրած մէկ երկու օր յապաղման պատճառը «Յաւելուած» մը համար պատրաստուած Վօրմաներէն մէկուն անակնկալ արուիլն էր :

ԻՄԲ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ճիպութի .— Ըստ Չեր հրահանգի՝ 12, 50 Ֆրանք վճարուեցաւ փոխանակ Չեր ներկայացուցած անձին, որ բացակայ է եղբր, անունը կողմէ զրկուած մէկուն : Ստացականը նամակաւ :

Աղէքսանդրիա . Բ .— Չեր տրպաղրական յանձնարարութիւնը այդ տեղ կարգադրել հաճեցէք . այդ յանձնարարութիւնը թղթակցութեամբ չի կարելի շուտով գլխի հանել :

Թիֆլիզ .— Չեր զրկած երկու տարուան բաժնեգիրը 8 Բուրլին՝ ժամանակին ստացուած է շնորհակալութեամբ :

Ն Ա Մ Ա Կ Կ Ի Պ Ր Ո Ս Է Ն

ԼԱՐՆԱԳՆ 909 Ապրիլ 23

Ատանայի շարքի մասին, կը զրէժանօթ ազգային մը, մինչև հիմայ լսած կ'ըլլաք անշուշտ . նկարագրել կարելի չէ . ոչ ալ չափազանցութիւն է խօսուած կամ գրուածները, ես ինքս ակնատես եղայ ու քիչ մնաց որ զո՞ն պիտի երթայի, հազիւ հազ շունչս Կիպրոս-առի և ըն և ըն :

Ե. Գ.

ԱԶԳԱՅԻՆ

ԿԱԼՈՒԱԾՈՑ ԵՈՒՐԶԸ

ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ ԱԶԳԻՆ ՎՆԱՍՆԵՐ ՀԱՍՈՑ

Նոր խնդիր մը չէ այս և ոչ ալ հինցած : «Արշալոյս» ի Խմբագրութեանը Արքայի աչքերով հետեւեցաւ կալուածոց շուրջ դարձած այս անկարելի ենթադրութեան և հիմայ ժամանակը հասած կը նկատէ տակաւ առտակաւ զբաղել անով :

«Արշալոյս» իր հիմք այս բոլոր խնդիրներուն՝ յարմար կը նկատէ սկսիչ հրատարակութիւնը Աղէքսանդրիոյ Խառն Դատարանէն այս մասին հրապարակաւ տրուած վճռագրի մը, սրուն համար խոստացած էր արդէն թէ՛ «ըստ խնդրանց շատ մը ազգայիններու պիտի ջանայ օրինակ մը ունենալ ձեռին» և ունեցած էր :

«Արշալոյս» այս հրատարակութեամբ՝ անուղղակի պատասխանած կըլլայ 1905ի նոյեմբերին Տ. Ե. Թորոսեանի զրկուած անտարագիր սպառնադիրներուն, երբ այս վերջինը՝ ձեռնարկած էր տպագրելու «Կաշուածոց Դիւան և Քաշալ. Ժողով» տիպարով տեղ մը, և միեւնոյն ատեն զոհարած՝ առած պիտի ըլլայ տեղական հայ պարբերականի մը միջնցաւ Պատի. Երեսի. Ժողովոյ Դիւանին եղած հարցումի մը թէ՛ «Ազն. Տ. Մկրտիչ Անդրանիկեանի հարցին մէջ Պատի. Երեսի. Ժողովէն արուած յոսնկայս շնորհակալարեանը պէտք է կարեւորութիւն ընծայել թէ՛ անոր դէմ հրատարակուած պրօշտի մը» :

«Արշալոյս» ի Խմբագրութիւնը հարցումի առարկայ պարջուրէն ըստացած չէ՛ սակայն :

ՊԱՏՃԵՆ ԲՆԱԳՐԻ ԴԱՏՎՃՈՅՆ

Աղէքսանդրիոյ Վերսիլեի խառն Դատարանին արձանագրութեանց գրապնակէն տրուած :

ԹԱՐԳՄ. ՅՐԱՆՍԵՐԷՆ ԲՆԱԳՐԷՆ

Յանուն Նորին Բարձրապատուութիւն Խորհրդի, Աղէքսանդրիոյ վերաբերունիչ խառն Դատարանը սոյն դատաւճիռը արձակեց, որոյ պարունակութիւնը կը հետեւի դատաւճիռութեան մը՝ որ տեղի ունեցաւ :

ԸՆԴ ՄԷՁ

Այլ Լամբու էլ Սասաի - Մաղաջի բնակիչներէն, Կաշուածաւեր, և տեղական հպատակ - որուն պաշտպանութիւնը ոտանձնած էր փաստարան Պ. Թը լա Բօմէրէյ և վերաբնութեան կը դիմէր :

ԸՆԴԻՄ

1. Եզրիպտոսի Հայոց Առաջնորդարանին, Տ. Մկրտիչ Մ. Վ. Աղաւունիի, անունով, որոյ փոխանորդ կը ներկայանար փաստարան Պ. Մանիւզարտի :

2. Տիար Մկրտիչ Անդրանիկեանի, Գահիրէի բնակիչ, Կաշուածաւեր և տեղական հպատակ, որուն կը փոխանորդէր փաստարան Պ. Սօփօլի :

3. Տիար Պետրոս Պօղոս Կարապետեանի, Գահիրէի բնակիչ և կաշուածաւեր, որուն կը փոխանորդէր փաստարան Պ. Թիֆօ Լէվի - Բողբընդէմ (intimée) :

ԵՒ ԴԱՐՁԵԱԼ

Վերեւ յիշուած Տիար Անդրանիկեան, վերադրեալ բողբընդէմ (intimée) կողմերուն, հետեւեալ պատճառներով :

Գահիրէի քաղաքային խառն Դատարանը, 1907 Ապրիլ 23 թուականաւ դատաւճիռ մը արձակած է, հիմնուելով Տիար Պետրոս Պօղոս Կարապետեանի 1905 Հոկտեմբեր 9 թուականաւ ներկայացուցած պահանջագրոյն վրայ, որով այս վերջինը Առաջնորդարանէն ուղած է իր ձեռքը գտնուած վարձակալութեան պայմանագրի մը համաձայն, 599 Ֆէատան (*) մշակելի հողի ունեւոր : Եղած այս պահանջին յենլով, Դատարանը վճռած էր որ Գահիրէի Հայոց

(*) Ե. Թ. - ՄԼԿ Ֆէատանը 4200 քառակուսի մէթր է, այս հաշուով՝ խնդրոյ առարկայ ազգային կալուածը կը բաղկանայ 2,515,800 քառակուսի մէթրէ :

Առաջնորդարանը՝ ըստ օրինական զեկոյցի՝ ուժը օրուան մէջ յանձնէ Տ. Պ. Պ. Կարապետեանի կողմէ պահանջուած հողերը, և սակէ դատ ի բաց առեալ դատական բոլոր ծախքերը, Առաջնորդարանը իր վնասանատուցում (indemnité) իւրաքանչիւր ֆէատանի համար տարեկան 125 դուրու, ողջ վճարէ 1905 Սեպտ. 22 էն սկսեալ մինչև հոգիւրուն ամբողջովին յանձնման թուականը :

Վճռած էր նաեւ որ Տ. Լամբու էլ Սասաի վերոյիշեալ դատաւճոյն ըստորագրուելէն 24 ժամ յետոյ հողերուն յանձնումը կատարէ, և սակէ դատ՝ բացի դատական ծախքերէն, ֆէատան զրուի տարեկան 125 դր. ողջ. Առաջնորդարանի Մատակի վճարէ, 1905 Սեպտ. 22 էն սկսեալ մինչև հողերուն ամբողջապէս յանձնման թուականը :

(Հոս պէտք է ըսել թէ՛ Տ. Լամբու վերոյիշեալ կալուածներուն նախկին վարձակալն է, և թէպէտեւ իր վարձակալութեան նախորդ շրջանի պայմանաժամը լրացած է, բայց կալուածոց վերատեսուէ Տիար Անդրանիկեանի հաւանութեամբ եղած վարձակալութեան նոր պայմանագրի մը համաձայն իր տրամադրութեան տակ են հողերը) :

Տ. Լամբու էլ Սասաի 1907 Օգոստոս 1 թուականի կողմագրով մը, նոյնպէս Տիար Անդրանիկեան իր կարգին 1907 Սեպտ. 30 թուականի բողբընդէմ մը վերաբնութեան կը դիմէին վերոյիշեալ վճռագրոյն զէմ :

Դատը 1907 Հոկտեմբեր 16 ի գուժմամբ բերուելով օրակարգի դրուեցաւ, և ըստ կարգի՝ 1908 Մայիս 31ի նիստին հանուելով՝ յետաձգուեցաւ նոյն տարուայ նոյեմբեր 5 ին, յորում Պ. Թը լա Բօմէրէյ Այլ Լամբու էլ Սասաի կողմէ՛ նոյն օրը բացակայ Տիար Պետրոս Պօղոս Կարապետեանի դատազանցութեան զէմ օրէնքի գործադրութիւնը, և դատին ուրիշ նիստի մը յետաձգումը պահանջեց դատաւարիւր համար :

Ատեանը Ընդհ. դատախազութեան կարծիքը ստանլէ յետոյ, միաձայնութեամբ որոշեց դատազանց նկատել բա-

ցակայ կողմը եւ բռնի ուժով (profit) գատարան բերել տալ, իսկ գատարանը թիւնը գատարանի նիւթին վրայ բարդելով՝ յետագայի գատարանը թիւնը, եւ այդ գտնարանն օրէն սկսելով մինչեւ յաջորդ ամսուան 31 ը վերստին ազդարարել, ծախքերը վերապահելով:

Դատը վերոյիշեալ նիւթին բերուելով, յաջորդաբար յետագուեցաւ 1909 Յունուար 12 եւ 21 ի գումարմանց, եւ վերջապէս գատարանը թիւնը տեղի ունեցաւ 1909 Յունուար 28 նիւթին մէջ, ուր Պ. ալ լա Բուէրէյ, յանուն Լամբլում էլ Սաաաիի, եզրակացուց որ՝ գատարանը հաճի նկատողութեան անհերժելի բուն իրողութիւնը լուսարանող փաստերը՝ փոփոխել նախորդ գատարանը եւ իրաւունք ընել, ինչ որ պարտ էին ընել նախորդ գատարանը, այսինքն պայցուցանել թէ՛ Առաջնորդարանը գործին մէջ սխալ քայլ առած է՝ եւ մերժել անոր պահանջները, ու գատարանը զայն ամբողջ ծախքերուն հատուցման:

Յետոյ, Դատարանին կողմէ նըշանակուած տնօրէն արտօնութիւն տալ (ordonner) Վաճիբէի Առաջնորդարանին արձանագրութեան տոմարները քննելով ստուգելու, 1905 Յունուարին՝ որ վարձակալութեան պայմանագիրը կնքուած թուականն է, Ալի Լամբլում էլ Սաաաիի կողմէ եղած 300 սկիւտ վճարումին միւսնայն թուականին արձանագրուած ըլլալը, ըստ այնմ տնօրինուելու համար գարձան:

Իսկ այն պարագային մէջ միայն, յորում Առաջնորդարանը նախնական Դատարանին նախնորդարանի եւ իմ պաշտպանակալի նկատմամբ ստուած վճիւրը նոյնը պիտի պահէ, այն ատեն Տիար Մկրտիչ Անդրանիկեան պաշտպանուելու փոխարէն պարտաւոր համարուի սուսուել նախորդ վճարողոյն պարտաւորած փաստագրման եւ բոլոր ծախուց պահանջները:

Այլ թիւր Սողոյի, Տիար Անդրանիկեանի համար եզրակացուց, որ Դատարանը հաւանի փոփոխել նախորդ վճիւրը, Յանուն օրինաց բաւ, պայմանագիրը՝ զոր կնքած է Տիար Անդրանիկեան, վաւերական է եւ օրինաւոր, եւ հետեւեալ անոր արտօնողութիւնները ամբողջապէս կրնան ընդունուիլ եւ գործադրուիլ նկատուիլ:

Յետոյ պահանջեց մերժուիլը հակակողորդին երկրորդ խնդրանքին, այն է, ընդունիլ որ՝ նախորդ գատարանը անփոփոխ մնալու պարագային, Տիար Անդրանիկեան ստանձնէ բոլոր ծախուց եւ փաստագրման գումարներուն վճարումը, այս պահանջը ըստ սուսու, ամեն պարագային մէջ սխալ հիմքերու վրայ դրուած է:

Պահանջեց նաեւ ապացուցանել թէ իր պաշտպանակալը (Տ. Անդրանիկեան) պաշտօնական հանդամանք ունէր վարձակալութեան պայմանագիրը նորոգելու Ալի պէյ Լամբլումի հետ եւ մանաւանդ Առաջնորդարանը պարտաւոր էր յարդըլ անոր նորոգած պայմանագիրը: Ասկէ զատ՝ գատարանը Առաջնորդարանը ինչպէս նաեւ Տ. Պ. Կարպապետեանը գատարանը բոլոր ծախուց վճարման, հաւանելով միտնողամտն որ Տ. Անդրանիկեան վկաներով եւ փաստերով ապացուցանէ բոլոր եղելութիւնը (les faits par lui articulés.)

Իրբեւ անհիմն (comme mal fondé) մերժել Ալի պէյ Լամբլումի Տ. Անդրանիկեանէ ըրած պահանջները:

Բոյն վերահաստատութիւնը դատական ծախքերով միասին:

Ատեանին (la cour) ներկայ էին:

Պ. Մարթոնուո նախագահ:

Պ. Պ. Վէրպապէր, Վանպի Պէյ, Սըրբի Պէյ, Չարգեան Պէյ, Բընիւնիէս, Բէպէճի եւ Թուի (Սորհրդականք) Ա. Գոմանո Ընդ: Դատ ֓ոխանորդ) եւ Ժեմանուրուլո (Իււանաղայի):

Դատարանը լսեց հակակողորդ կողմերը ներկայացնող փաստարաններուն եզրակացութիւնները եւ Ընդ: Դատարանը կնք խորհրդակցելու եւ կարծիքը անհերժելի յետոյ:

Նկատի առաւ (vu) 1905 Յունիս 9 թուականաւ կնքուած պայմանագրոյն ստորագրութիւնները, որ այդ թուականին յաջորդող Օղոստոս 8ին թուականի հաստատում (date certaine) կրած էր. պայմանագրի՝ որով Տ. Անդրանիկեան իր Անդրանիկեան կալուածող վերահաստատող պայմանական հանգամանքովը ազգային կայուածները վարձու աւելած էր Տիար Լամբլում էլ Սաաաիի, որ արդէն 1902 Ապրիլ 21 թուակիր վարձակալութեան պայմանագրի մը համաձայն մինչեւ այն ատեն իր Իււանուութեան ներքեւ էին կալուածները եւ այս վերջին պայմանագիրը նոր երկր տարուան շրջանի մը համար կնքուած էր 1905 Դեկտեմբերին սկսուել:

Նկատի առաւ Տէր Գարութիւն քէնյ Յակոբեանէ Վճիւրէն Առաջնորդարանին ստորագրութեամբ 1905 Օղոստոս 2 թուականաւ առ Տ. Ալի Լամբլում էլ Սաաաիի ուղղուած զեկուցագիրը, որով վերոյիշեալ Ալի Լամբլումը կը հրաւիրէր 1905 Օղոստոս 25 ին երկնայնայն ժամը 6ին Առաջնորդարան ներկայանալ հերքարկային անօրէին մասնակցելու համար, «եթէ կը փոփաքըր կայուածները վերստին վարձելու»:

Նոյն զեկուցագրով կը յայտարարուէր միանգամայն թէ՛ «1905 Յունիս 9 ին Տ. Անդրանիկեանի համաձայնութեամբ կնքուած վարձակալութեան պայմանագիրը ջնջուած եւ անվաւեր է, որովհետեւ Առաջնորդարանը տեղեկութիւն չունի այդ համաձայնութեան եւ կնքուած է այնպիսի անձի մը հետ, որ այսպէս վարձուելու ո՛ր եւ է պաշտօնական հանգամանք չունէր»:

Նկատի առաւ Տ. Ալի Լամբլում էլ Սաաաիի բողոքողին համաձայն, օրինական ճամբով առ Տէր Գարութիւն Յակոբեան զրկուած 1905 Օղոստոս 27 թուականաւ զեկուցագիրը, որով զայն պատասխանատու կը ճանչնար:

Նկատի առաւ 1905 Սեպտ. 22 թուականաւ կնքուած եւ 1905 Հոկտ. 4 ին թուականի հաստատում (date certaine) կրած վարձակալութեան պայմանագիրը, որով Տէր Գարութիւն Յակոբեան խնդրոյ տարիայ ազգ. կալուածները երկր տարուան համար վարձու առած էր Տ. Պ. Պ. Կարպապետեանին 905 Սաաաիի մը 22 Լն սկսելու:

Նկատի առաւ 1905 Հոկտ. 9 թուականի, Տ. Պ. Պ. Կարպապետեանի գիւմուսին համաձայն, յանուն Հայոց Առաջնորդարանին Տ. Մկրտիչ Մ. Վ. Աղաւունիկ ստորագրուած եւ առ նախորդ վարձակալ Ալի Լամբլում էլ Սաաաիի զրկուած պահանջագիրը, որով վարձուած հողերուն անմիջական յանձնումը կը պահանջուէր:

ՀԵՌԱԳԻՐ

4. Պոլիս 24 Ապրիլ. — Տէյի Բուսիլի թղթակիցը, Պ. Վ. Ֆ. Մուր ծանուցէս վիրաւորուած է:

4. Պոլիս 24. — Կը կարծուի թէ Սուրբանը երաշխաւորութիւններ կողք գտնիքէն, հակառակ պարագային մէջ անողոք միջոցներ ձեռք առնելու պատուարիքով:

4. Պոլիս 24 Ապրիլ. — Չուկերուն իրար անձաւոր է, բայց հարաւակիւն է որ 1000ը կանցնի:

Լոնսու 24 Ապրիլ. — Կասաղի պայքարէ մը յետոյ, սահմանադրասեր զօրախումբերը երջարգը որով լակոծել սկսան:

4. Պոլիս 24 Ապրիլ. — Երջարգի պահակախումբերը վար զրին իրենց զեկները:

Հեռագիրները Սուրբանին մասին լսան մը չեն ըրեր, բայց Վուրուրը քորքիլլանսերով պաշարուած է Սուրբանին շախուսը արգիլելու համար:

Ի ՆՊԱՍ ԳԱՆՏԻՈՅ

ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԵՒ ԳԵՐԵՉՄԱՆԱՏԱՆ ԹԱՌԱՋԻԿԱՅ ԶՈՐԵՔՇԱՐԻԻ 15)28 Ապրիլ 1909, Յ. Մ. Ժամը 6 1)2 ին

ՍԻՆԵՄԱԹՕԿՐԱՖ ՎԵՆԻՒՍ

Տէր ԵՒ ՏԵՐԵՆ ԵՐՈՒԱՆԻ ԳԱՆՏԵԱՆ Պուրազի Կառնախասն յիւսաց քրաւիկի զծին վրայ ԼՈՐ ԲՐՕԿՐԱՄ Ե.ԶԳԱՅԻՆ ԵՔԵՂ ՏԵՍԱՐԱՆԵՐ ԳԻՆԵՐ. — Ռեգիլի 6 Դր. ողջ Ա. Կարգ 4 Դր. ողջ Բ. Կարգ 2 Դր. ողջ

ՏՐԱԿԵ ԹՊՈՅ Ի ՆՊԱՍ ՍՈՒԼԼՈՅ

Տ. Տ. Գարութիւն Բէնյ. Գարութեան 20, Մամբըէ Բէնյ. Վարդանեան 20, Տէր Ե Տիկին Կարպապետ Պէյ Գուլումեան 100, Արշաւ թիւրպեան (Թամիլէ) 100, Օհան թիւթեան 50, Եագուպ Սարգիս (Փաստաբան) 50, Հայկ Ճերանեան (Նակ-համաթի) 50, Տիգրան Հաղարեան 30, Կարպապետ Գեգեան 25, Կարպապետ Բարունակեան 20, Արթին Հարսեան 20, Մարտիրոս Եղբ. Սարգիսեան 20, Գարբիէլ Տէր Սրապեան 20, Յովհաննէս Թէլլալեան (Մէլլալի) 20, Ստեփան Հէքիմեան 29, Սարգիս Մարգարեան (Պէնի-մէզար) 20, Մ. Թէրզեան (Փէյլում) 20, Յ. Աւետիսեան 20, Ղարաբալ Աւետիսեանի ձեռամբ ծախուած 60, զուժար 685 նախորդ ցանկերու գումար 2706,25 3381,25 (Եարունակելի)

ՆԱՄԱԿ ԵՐՈՒՍԱԳԵՍԷՆ ՈՒԽՏԱՆՈՐԵՐԸ ԵՐՈՒՍԱԳԵՍԷՆ ՄԷՂ

Այս տարի նախորդ տարիներէն բաւական շատ են թուով. բացառութիւնները յարգելով հանդերձ մեծագոյն մասը յարգելանք ընտրեալներ !! կախ, ձեռկուռ. գուշութիւն անպակաս է մեջերին, Սահմանադրութեան բերած ազատութիւնը կամայ ժողովուրդը խնդրեցած է, եւ կամ սխալ մը բռնուծով մ'ազատութիւնը տնջխանութիւն հասկըցած են, որը որ ալ ըլլայ, խիստ ցաւալի է վիճակնիս. այս խիստ յուս ուղղութիւնը ամբողջ հայութեան արժանապատուութիւնը կը վերաւորէ եւ կ'արտաւորէ, եւ մեր Յեղափոխական մարմինները փոխանակ ասանկ կիսավայրենի ժողովուրդներով գործի գլխին անցնելու, շատ լաւ եւ խիստ օգտակար գործ մը տեսած պիտի ըլլային, եթէ սկիզբէն ամեն ջանք ի գործ գնէին զպրոցներու մասին, ռուսաւ, զիտութիւն, կրթութիւն, յատալ տանէին, նոր սերունդը զարգացնէին, եւ հայրենեաց ու ազգութեան անձնուէր եւ կրթեալ զաւակներ պատրաստէին, որ գուցէ աւելի քիչ զսոքով, ներկայ ազատութիւնը ձեռք կրնայինք բերել, եւ բերելէ յետոյ ալ օգտակարակալ կրնայինք գործածել: Այսօր մատի վրայ հաշուելով ամբողջ հայութեան մէջ հազիւ հինգ երկրորդական վարժարաններ ունինք. եւ անոնցմէ զորս եկազ սերունդն ալ կատարելապէս անհաստ սկեպտիկներ են, ի հարկէ աննշան թուով բացառութիւններ կը գտնուին. եւ ես այն հաւատքը ունիմ թէ՛ այն անձը որ իր հաւատքը եւ հաւատալից վրայ կատարեալ զաւաքար չունի, եւ իր պաշտած կրօնը ամէն բանէ վեր չը դասէր, այնպիսին եւ ոչ մի կերպով օգտակար կըլլայ հանրութեան եւ մասնաւորապէս ազգութեան. այս համոզումս վրայ շատերու հետ վէճի բռնուած եմ, եւ շատեր փիլիսոփայական քարոզներ կարգացած են գլխուս, եւ սակայն գործնականին մէջ, միշտ հակառակը տեսած եւ զտած եմ անոնց ըսածները:

Ժողովրդեան յետագիւմութեան եւ կրօնի արհամարութեան գլխաւոր պատասխանատու թեան մէկ բաժինն ալ մեր կղերական գատին կիլնայ, ինչու որ, ունեցած ենք եւ ունինք այնպիսի անձնասէր. շահամուլ, հեղգ կամապաշտ եւ քննախնդիր պատրիարքներ, առաջնորդներ եւ քահանաներ որք հակառակ իրենց նըուերական կոտորման եւ հակառակ ուխտին ջանացին միշտ ժողովուրդը սղէտ պահել, որպէսզի իրենք իշխող մնան, ընդհակառակը ժողովուրդը քանի զարգանայ, նոյն աստիճանաւ ալ կղերին յարգը կը բարձրանայ, օրինակ, այսօր Անգլիոյ եւ Գերմանիոյ պէս լուսաւորեալ ազգաց կղերը աւելի մեծ յարգ եւ համարում կը վայելէ քան մերինը. անցեալը, անցաւ. գոնէ ներկային մէջ անցեալի փորձառութեամբ օգտուելը եւ սխալը ուղղելն ալ մեծ բան մ'է. դժբաղդաբար այն յոյսն ալ կը պակսի մեր մէջ:

Գրութեանս մէջ կիսաւայրենի բառը գործածեցի, պուցէ շուտի վերաւորանք զգան այս բառէն. միջազգայ մը պատմեմ, եւ տեսնեք

ՄԵԾ ՎԱՃԱՌՄՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆՍԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՅԱՏԿԱՆԵՐ ԻՐԵՆՅ ՎԵՐԱՊԱՀԵՆԼԷ

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան դնելով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի պէտք է նախընտրել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ է կայ հոս ու հոն ժամալաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին :

Պարտական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բայց մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալի է :

Մեր վաճառատունը վերջապէս, գիններու ածանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մա- նաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անծխոտի ապացոյցներէն մին ալ զարդայած Եւրոպացիներէ օրըստ- օրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

Թէ՛ ընթերցասէր հասարակութիւնը իրաւունք չը պիտի տայ ինձ. վերջերս քարոզիչ վարդապետ մը, իր քարոզին մէջ ըստ թէ՛ « տխուրաց մէջէն խուլ շշուկ մը ականջու կը հասնի, թէ՛ վարդապետները դրամ կը գողնան և հաշիւ չ'են տար- շատ սխալ է . դրամ գողցող և հա- շիւ չը տուողները գիշերով վանըր կա- զրպտեցին, պաշտօնատուները փա- կեցին և Յոպպէ փախան : Պատրի- արք և միաբանութիւն ամեն միջոց ի գործ դրին այն փախտական ա- ւազակները հոս բերել և հաշիւները անոնց ձեռքէն առնելու համար, մտիկ չըրին, Միաբ. Ընդհ. Ժողո- վս ալ, ա՛լ ճարահատեալ միանգամ ընդ միշտ և անպայման կերպով վը- տարեց զանոնք միաբանութեան ան- դամակցութենէ և խաղառ խղից ա- նոնց յարաբերութիւնը. հիմա մեր հաշիւները մէջտեղ են, ո՛վ որ կը փափաքի. թող երթայ զիւսանատու- նը և ելեմտիչ տեսչէն պահանջէ ու տեղեկանայ մեր 3-4 ամսուայ հա- շիւները : » Վա՛յ դուն ես այսպէս կըրես, յաջորդ օրը քանի մը կա- մէններ, կը խուժեն Պատրիարքա- րան և առանց քիչ մը խալկելու 95 ամեայ Պատրիարքի մը ձեռքէն կը բռնեն և անաւորաբար և անպա- հաւատեմ, իր Աթոռէն կը հանեն և իրենցմէ ամենէն յրբազոյցը Աթո- ուր կը նստի, միւսները կը պոսան կը գոռան, մենք հաշիւ կուզենք, այսքան ալ բաւական չէ, թուղթ մ'ալ կը ներկայացնեն Ս. Պատրի- արքին, թէ սա թուղթը հիմա ան- պատճառ պիտի ստորագրես, և մի- արանութենէ վարուած վարդա- պետները ես բերել տա և իրենց պաշտօններուն գլուխը անցնես. ծե- րունի Պատրիարքը կը բարկանայ . բայց այն փողոցայիններէն մտիկ ը- նողը ով է . սակայն Ս. Պատրիար- քը, ամեն ճնշում և բռնութիւն ար- համարհելով իսպառ կը մերժէ ըս- տորագրել անանկ թուղթ մը, թէ էս ես իմ կամքիս տէրն եմ և ո և է արտաքին աղիւցեութեամբ գործ չ'եմ տեսներ . ահա կենդանի ապացոյց մը ընդդէմ միւլգանդիոնիս այն սուտ և հիմնովին սխալ յերիւրանքներուն թէ՛ Յարութիւն Պատրիարքը, բըռ- նի և ճնշման տակ կատարագրէ իրեն ներկայացուած գրերը : Սակայն մենք այժմ ի լուր աշխարհի ճակա- տարաց կը յայտարարենք թէ՛ հի-

մայ Աւետիս ծառան չ'իկայ Յարու- թիւն Պատրիարքին քով, որ ճնշում գործելով ո և է պաշտօնական կամ անպաշտօն դիր ստորագրել ապ . հիմա Յարութիւն Պատրիարքը աշտտ է ամենակերպ ճնշումներէն, իր ա- զատ կամքովը և հաճութեամբ կըս- տորագրէ այն գրերը միայն, որ ինքը կը հաճի : Աւետարաց այս սինդիքոր դատակարգին անօրինակ շարժման գլխաւոր դրդիչ կը հան- դիսանայ նաև Յարութիւն Սրկդ . Մանաւեանը . այս վերջինը կը նը- մանի ճիշտ դեմառաւելի, որ ինչ բանի վրայ կոխէ նայն գոյնը կառ- նէ : Ժամանակաւ գալուցէն և մի- արանութենէն վճռուած է, իր կըռ- ուարար և աննկարագիր բնութեանը համար . վերջը հազար աղաչանք- ներով, խնդրագրերով միաբան ընդունուած է . Մատթէոս Վ. Գա- յըզճեանի ձեռքին տակը գործիք ըլլալու համար, գիշերով գաղտնի Սարկաւագ ձեռնադրուած է, անկէ յետոյ քանի մ'անդամներ Սարկա- ւարդութենէ զրկուած, պատժուած և նոյն իսկ աքսոր դացած է . անց- եալ տարի բոլորովին կարգաւոր ճըռ- չակուած և վանքէն վճռուած էր, Իզմիրլեան Սրբազան Պոլիս երթալէն յետոյ, հոն՝ նորին Բ . Սրբազնու- թեան կը դիմէ կազաչէ ու կը պա- զատի իր անօթի, ծարաւ և անպա- տուար վիճակը նկարագրելով . Իզ- միրլեան Պատրիարք կը դրէ Ամեն- Յարութիւն Պատրիարքին, որ Մա- նապեան Սարկաւագին ներէ և փանք կոչէ . Յարութիւն Ս. Պատրիարք ինչպէս նաև բոլոր տարագիրներուն և վտարուածներուն ներքեց ու փանք կոչեց, այս վերջնոյն ալ ներկով կանչեց, յուսալով թէ՛ դուրսըրը կրած խեղճութենէն մի քիչ ազդը- ուելով զգաստացած է . և սակայն ինձը իր մորթը կարելի է որ փոխէ, բայց Յարութիւն Սարկաւագ Մա- նաւեանին անկարելի է որ մի քիչ իր բնութիւնը փոխէ . կը մնայ միշտ նոյն, կռուարար . քնու . յանդու- գըն, իւռովարար, յաջալիտ և լին, և լին, բնութեանը մէջ : Թիլիքապէս ալ յետին աստիճան տկար ըլլալով, գրեթէ տարւոյ կէսն ալ հիւանդա- նոցները կ'անցնէ : Վերջապէս ա- մեն կերպով վանքին գլխուն կա- տարեալ պատուահաս մ'է :

ՎԱՐԳԻՅՍ

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻՍԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՄ Ժ . ՆԱՅՏԻՆԿԻՐ

Պալատի փողոց . Խաղէտարի սեփականութիւն . Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց . Գաթէ Տը Լա Պուրսի կից

Հին ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւ տոյն կարի մեքենաները Սինկերներն են ևւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :


400 և աւելի վկայական ևւ մեքայնեով վարձարուած, երաշխաւորեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիէզդակակն արտեսահանդիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԽՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկեր յաճկանչին

Կին ՉԱՓԱՒՈՐ



Չրի դասեր և նորոգու- թիւններ, Սինկեր մեքենա- յից համար, յաճախորդա- տուններուն մէջ .
Վճարմանց դիւրութիւն
Փոխանակութիւն հիներու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԴԻԻՐՈՒԹԻՒՆ

Ալ հոգ մի՛ ընէք թէ՛ ձեր կարի մե- քենաները Շալիկայի մը գլխուն վրայ գրած հոս ու հոն պիտի փոխադրէք նո- րագիրու համար :

Պ. Սարգիս Թաշկեան՝ իրեն գիմող շատ մը յաճախորդներին քաջալերուած, առնէ մը ի վեր իր պաշտօնը թող- լով, յատուկ կտոր պատրաստած է ևւ իր չրջուն ու շարժական խտնովը « Վա- րօն » ին (անոր պղտիկ ձիւն անունն է) բարձած ամէն թողէ կանցնի ամէն օր ևւ ամէն ժամ :

Չիւրք ճանչնալու դժուարութիւն չկայ, Պաշիկ ձիւն մը քաջած կառ- քին վրայ երբ մեքենաներու գործիք- ներ տեսնէք, որոնն չորս կողմը ա- մեն բնութիւնը գրուած է, մանաւանդ Réparation des Machinesը, անմիջապէս կա՛մ « Վարօն » յիշեցէք, ևւ կամ քիչ մը անպիս Սարգիս Թաշկեանը տես- նել ուզեցէք, իր կապոյտ կտուէ քոսեային մէջ, անիկայ ոչ միայն կա- րի մեքենաներու նորոգութիւն կը- նէ անիման յաջողութեամբ ևւ երաշ- խաւորեալ, այլ ևւ նոր մեքենաներ ալ կը հայթայթէ :

Չ'մոռնանք նաև կազի վտա- րաններու ևւ ֆոնօկրաֆներու նորո- գութիւնը ևւ նորերու հայթայթումը :

Պ. Թաշկեան այս դիւրութիւն- ները ընծայելով, իր նմաններուն ծա- ուցած ըլլալու պոնուտիւթիւնը պիտի ունենայ, ևւ քիչ մ'ալ զբաւ շահի պիտի ուզէ, իր պիտիակներուն գաստարա- կութեանը յաւկացնելու համար :

ԾԱԽՈՒ ԳԻՐԲԵՐ

« Արշալոյս » ի տպարանին մէջ, Շէ- րիք բաշայի պարտէլին դիմաց՝ կը վա- ճառուին հետեւեալ պրօշիւրները :

Ա. ՊԱԼԻԱՆ

Ժողովուրդին ՄԱՏԵՆԱԳՐԱՆԸ

Թիւ 1	Թրքուհին	50	սանթիմ
« 2	Հիւլէն	50	»
Թիւ 3	պրօշիւրը	թէն	հրաշալիք մը

բայց ինչ ինչ նկատուածներով զանց կը- նենք անունը յիշատակել կարճ ժամա- նակի մը համար . գիտնէ մէկ ֆրանք :

Դիմել Արշալոյսի Խժմարութիւնէն զատ Հեղինակին հասցէին որ է .
Mr. A. Balian
Le Cairo

ԱԸՄՄԱՐ

ԳԵՈՐԳ ԱՆՃԱՃԵԱՆ

Կը հայրաքիտ տունը, դրամական փոխառութիւններ, կանաւորեալ սեւեակներ, հաշի, խաւնորի ևւ կաշուածներու փոխանցման գոր- ծաւնորիւնի .
Իր կեդրոնատեղին է Պաղար Մուրաբի դրան քովի երկու սրճա- րանները ամէն օր ժամը 7 էն մին- չև 12 կէս օրէն առաջ, և ժամը 2 էն 9ը կէս օրէ յետոյ .